ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.10.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-37/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. N 1/73-1/12154-16 և 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրություններով ներկայացված «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 01529346), «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02564643) և «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02532631) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-37/16 բողոք), ինչպես նաև ՍՑ-ԳԲԽ-37/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 19.10.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

1. «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 01.04.2016թ. թիվ 01/04.1/1266-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (08.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ի վերաբերյալ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 01.04.2016թ. թիվ 01/04.1/1267-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (08.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 10.05.2016թ. թիվ 5/08/5298-16 գրության հիման վրա, 17.05.2016թ. թիվ 1/73-1/14307-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին Ցուցակին ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

3. «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի վերաբերյալ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 13.04.2016թ. թիվ 01/04.1/1486-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի

կողմից 05.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (05.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Այնուհետև, Նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությամբ տրամադրել է տեղեկատվություն, համաձայն որի՝ «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն 23.03.2016թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին:

2. «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ն 22.03.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (08.02.2016թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

3. «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.

«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն 22.03.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (08.02.2016թ.) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

2. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԵՄԻԿ-ՇՀԾՁԲ-15/4-18/01/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.

«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն 14.06.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 2016թ. հունվար ամսին, իսկ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը 5 ամիս անց, երբ արդեն «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն հարկային պարտավորություն չի ունեցել: «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն խնդրել է չներառել Ցուցակում:

4. «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.

«ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-37/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը և չի ներկայացրել որևէ առարկություն:

5. **Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

Երևանի քաղաքապետարանը 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

6. **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 10.05.2016թ. թիվ 5/08/5298-16 գրությամբ ներկայացրել է «ԵՄԻԿ-ՇՀԾՁԲ-15/4-18/01/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

7. **ՍՑ-ԳԲԽ-37/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 19.10.2016թ. եզրակացությունը և առաջարկել է՝

1.ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ ներկայացված «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 01529346) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ ներկայացված «ԱՐՄՆՅՈՒՔ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02564643) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

3. ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրություններով ներկայացված «Հ3 ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02532631) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

8. ՍՑ-ԳԲԽ-37/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ ներկայացված **«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.

- «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 08.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

- Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (08.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 11 836 080 ՀՀ դրամի չափով:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:
- Կենտրոնը 01.04.2016թ. թիվ 01/04.1/1266-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում: Կենտրոնը, միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (08.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

<u>ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 և 17.05.2016թ. թիվ 1/73-1/14307-16 գրություններով ներկայացված **«ԱՐՄՆՅՈՒՔ» ՓԲԸ-**</u>

ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. *Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.*

• «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 08.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (08.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 5 241 280 ՀՀ դրամի չափով:

• ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

• Կենտրոնը 01.04.2016թ. թիվ 01/04.1/1267-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի

«բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում: Կենտրոնը, միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (08.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

• ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. *ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԵՄԻԿ-ՇՀԾՁԲ-15/4-18/01/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.*

• ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 10.05.2016թ. թիվ 5/08/5298-16 գրության հիման վրա, 17.05.2016թ. թիվ 1/73-1/14307-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին Ցուցակին ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

• «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԵՄԻԿ-ՇՀԾՁԲ-15/4-18/01/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 29.01.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (29.01.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 39,605,081 ՀՀ դրամի չափով:

ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրություններով ներկայացված **«ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ.

• «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 05.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (05.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 659 422 ՀՀ դրամի չափով:

• ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով

ուսումնասիրել «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

- Կենտրոնը 13.04.2016թ. թիվ 01/04.1/1486-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից 05.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում: Կենտրոնը, միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (05.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:
- Այնուհետև, Նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությամբ տրամադրել է տեղեկատվություն, համաձայն որի՝ «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն 23.03.2016թ. մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին:

9. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-37/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

1. ***«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ -ի վերաբերյալ.***

Խորհուրդը, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրությունը և կից փաստաթղթերը, «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի 22.03.2016թ. գրությունը, Նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությունը և կից փաստաթղթերը՝ հայտնում է հետևյալը.

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 08.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (08.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն ***11 836 080*** ՀՀ դրամի չափով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 01.04.2016թ. թիվ 01/04.1/1266-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում: Կենտրոնը, միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու

պահից (08.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Խորհուրդը արձանագրում է, որ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ մինչև բողոքարկման խորհրդի կողմից սույն որոշումը կայացնելը առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (08.02.2016թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը:

2. «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ-ի վերաբերյալ.

Խորհուրդը, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրությունը և կից փաստաթղթերը, «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲԸ-ի 22.03.2016թ. և 14.06.2016թ. գրությունները, Նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությունը և կից փաստաթղթերը՝ հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 08.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (08.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն **5 241 280** ՀՀ դրամի չափով:

Կենտրոնը 01.04.2016թ. թիվ 01/04.1/1267-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը, միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (08.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ԱՐՄՆՅՈՒՋ»

ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այնուհետև, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 10.05.2016թ. թիվ 5/08/5298-16 գրության հիման վրա, 17.05.2016թ. թիվ 1/73-1/14307-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին Ցուցակին ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

«ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված «ԵՄԻԿ-ՇՀԾՁԲ-15/4-18/01/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 29.01.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (29.01.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն **39,605,081** ՀՀ դրամի չափով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

• *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «ԱՐՄՆՅՈՒՋ» ՓԲԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***29.01.2016թ.*** մասնակցելով «ԵՄԻԿ-ՇՀԾՁԲ-15/4-18/01/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և ***08.02.2016թ.*** կրկին հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որի շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, ***եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ*** կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

3. «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի վերաբերյալ.

Խորհուրդը, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրությունը և կից փաստաթղթերը, Նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությունները և կից փաստաթղթերը՝ հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 05.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցության հայտը ներկայացնելու (05.02.2016թ.) օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն ***659 422*** ՀՀ դրամի չափով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.02.2016թ. թիվ 01/61-3132 գրության հիման վրա, 02.03.2016թ. թիվ 1/73-3/7965-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 13.04.2016թ. թիվ 01/04.1/1486-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է

եզրակացություն, որով արձանագրել է, որ «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի կողմից 05.02.2016թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Կենտրոնը, միաժամանակ տեղեկացրել է, որ խախտումը թույլ տալու պահից (05.02.2016թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Այնուհետև, Նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությամբ տրամադրել է տեղեկատվություն, համաձայն որի՝ «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ն ***23.03.2016թ.*** մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*

• *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***05.02.2016թ.*** մասնակցելով «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/16» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և ***23.03.2016թ.*** կրկին հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան

որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, ***եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ*** կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ ներկայացված «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ ՎԻ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 01529346) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-3/12208-16 գրությամբ ներկայացված «ԱՐՄՆՅՈՒՔ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02564643) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

3. ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2016թ. թիվ 1/73-1/12154-16 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրություններով ներկայացված «ՀՅ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 02532631) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Նազարյան Մանե**